զոս վարդապետ Կիլիկեցին՝ ՉԿԴ = 1314 թուին Գլաձորում, ինչպէս տեսանք(*)։

Արզնիի Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքի ձեռագիրներից մէկը՝ Վարք Եւագրեա և Նեղոսի, գրուած է 1319 թուին «ի գաւառն Հայոց ձորոյ ի վանս Գլոյձոր». ընդգծուած տառերը արտագրութեան կամ տպագրութեան սխալներ են, անշուշտ, որ պէտք է լինի «Վայոց» և «Գլաձոր»(**)։

Վերև յիշուած Մարտիրոս վարդապետի համար «Կիւրեղ սպասաւոր բանի» գրել է 1321 թուին մագաղաթի մի աւետարան, որ ապա անցել է Դաւիթ ուսուցչապետի ձեռքը, իսկ սա էլ նուիրել է Սպիտակաւոր Աստուածածնի վանքին և նորա առաջնորդ Մկրտիչ վարդապետին, որ նկարագարդուած է Թորոս Տարօնեցու ձեռքով(***)։

Եսայի Նչեցին ինքը բացի Աստուածաշնչից ստացել է և մի աւետարան Գլաձորի դպրոցի ճոխ գործերից մէկը. ընդարձակ յիշատակարանը չարագրուած է Նչեցու կողմից (Ցաւել. Բ. 83), գրուած «ՉՀԲ յա-

Պատկեր 215.

ղեթեանս տումարի, յաշխարհակալութի. մեծ ինքնակալ Խանին Պուսաիտ կոչեցել., ի թագաւորութեն. հայոց Դեւոնի, նըստեալ ի գահն Կիլիկեցոց. և տանն Վրաց և մեծաց Հայոց թգ. Գաւրգի և յաւուրս տէրութե. մեծ իշխանաց իշխանին տանս Սիւնեաց Բուրթելի, ամենաբարէպաշտի և քաջի և միշտ յաղթողի»։ Եսայի «կրսեր բանասիրաց և յետին վարժապետաց» գրել է տալիս և Նուիրում . . . (երկու տող քերուած, ուստի և անյայտ, թէ ո՞ր վանքին է նուիրում) «յիշատակ բարեաց վարդապետին իմոյ Ներսի-

Պատկեր 216.

սի մեծ և քաջ ռետորի և ՅԾախսոս վարժապետի», իւր մարմնաւոր ծնողների, երախտաւորների, «մանաւանդ աշակերտեալ մանկանցս, զոր ծնաք բանին երկամբք, որ դեզերին ի կրթութի. տեսական և գործական իմաստից և ՅԱծաչունչ տառից»։ Գրութեան տեղը յիշուած է ընդհանուր կերպով, «ի գաւառիս Սիւնեաց, ի նեղ և յանձուկ աւթեվանիս։ Իսկ յիշխանութի. վերոգրեալ մեծ իշխանաց իշխանին եւ յաղթող սպայապետին Բուրթելին եւ երկու արեգակնանման զեղեցկագեղ հարազատ զաւակացն իւրոց Պեչքենայ եւ Իւանէի։ Նա եւ ամուսնոյ իւրոյ Վախախին», որոնցից «մեք մեր աշակերտաւք բազում եւ անթիւ գութս բարեաց գտաք»։ Յիշում է նաեւ «Սիւնեաց մետրոպոլիտ Տ. Յոհաննէս Աւրպելին», որ իւր աշակերտն է, նորա հետ և Ստեփանոս–Տարսայիճին, որ դարձեալ իւր աշակերտն է եւ «մանուկ տիւաք առեալ զաստիճան արհեպիսկոպոսութե.»։ Յոհան Աւրպէլը Լիպարիտ Օրբէլեանի որդին էր, իսկ Տարսայիճ–Ստեփանոսը Ջալալ Օրբէլեանի որդին,

(*) Ch. V. T. II. vip. II. մեր Potomstvo Tarsaitcha ևն.։ Իսկ ձառը Թագորցու Ձեռ. № 734, 92 ա.։

(**) Սրուանձտեան, Թորոս Աղբար, Բ., 386։

(***) Փիրղալէմեանի Նչխարք ևն., Conybeare. Catalogue. 24։ A. Tchobanian, La Roseraie d'Armenie III. Paris, 1929, p. 270. տես Ցաւել. Բ. 23։